

ՆՈՐ-ԴԱՐ

№ 137 ՏԱՍԵՆԻՉԻՆԻՐՈՐԻ ՏԱՐԻ Հարսի, 1 Օգոստոսի

1898

Հարսի, 1 Օգոստոսի ՏԱՍԵՆԻՉԻՆԻՐՈՐԻ ՏԱՐԻ № 137

Տարեկան 10 ռուբլի, վեց ամիսը 6 ռուբլի, երեք ամիսը 3 ռ. 50 կ. Թիֆլիսում ամիսը 1 ռ., հասոյ 5 կ. Բաժանորդ գրում են Թիֆլիսում միմյանի խմբագրատանը:

Խմբագրութեան հասցեն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis, REdaction „Nor-Dar“

Խմբագրութեան բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը: Ցայտարարութիւնները ընդունում են ամեն լիզուներով: Ցայտարարութիւնների բաժինը՝ 2 կ., բեկամների համար՝ կրկնապատիկ

Օգոստոսի 1-ից ց31-ն ղեկավարվողները «Նոր-Դար»-ին բաժանորդ են գրում՝ եւ վճարում են 5 ռուբլ.:

ԲՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ
Ա. Ա. Տ. Ն. Օ. Ր. Գ. Ո. Գ. — Գիւղացիները
և քաղաքացիները:
Քիմիայի:
Ք. Ռ. Ն. Ի. Կ. Ն. — Լուրեր:
Մեկ գրում են. — Ս. Ե. Միլիանից, 2 ար-
դարաբան:
Մանուկ շարժը:
Ք. Պ. Պ. Ք. Պ. Ք. Պ. — Գերմանիա: Փը-
րանիա: Կրեմլ: Քուլարիա:
Հ. Ա. Ա. Գ. Ր. Ն. Ր.:
Բ. Ա. Ա. Ս. Ի. Ր. Ա. Ն. — Թիֆլիսի
մեր օրերում և քառասուն տարի սրա-
նից ստացի:
Տ. Ա. Գ. Ե. Կ. Ա. Ս. Ո.:
Յ. Ա. Յ. Ա. Պ. Ր. Ս. Ի. Ն. Ն. Ն. Ր.:

Թիֆլիս, 31 օգոստի 1898 թ.
ԳԻՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ԵՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ-
ՆԵՐՐԸ

Հացի, ցորենի պահատեղիները և թանկութիւնը շատ նեղ տեղն էր գրել մեր երկրի, մանաւանդ, չքաւոր և գիւղացի ժողովուրդին:

Երկրին տեսն սով էր սպառնում, մանաւանդ որ Սպանիա-Ամերիկական պատերազմը սկսւած լիւրջ անհրաժեշտ էր իսկ ցորենի գինը բարձրացաւ ցորենի սպիւկուլացիա անողների շնորհիւ, որոնք արձեւատական կերպով ցորենի գինը բարձրացրին՝ աճապին քանակութեամբ ցորեն ամբարնելով:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ԹԻՒՐԻՆԵՆ ՄԵՐ ՕՐԵՐՈՒՄ ԵՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏԱՐԻ ՍՐԱՆՅԱՆՈՒՄ»

Այս վերնագրով մօտ օրերս գերմանի-
րեն լիզուով լայն է տեսել մի փոքրիկ
գրքի, որը պատկանում է Երեւելի
յայտնի ճանապարհորդ, բուզապետի
համալսարանի պրոֆեսոր, յայտնի թըր-
քաւոր Ա. Վամբերու գրքին: «Պետ. Վետ.»
ժանտպանում է այդ գրքի լի լուսն-
գիւղիկի հետ:

1850 թուականից, ստում է Վամբե-
րին, Օսմանեան կայսրութեան լիզուն ու
պատմութիւն իմ անընդհատ ուսումնա-
պրութեան ստարկան են կազմում: Այն
ամենը, ինչ որ մենք վարուց արդէն
լուսն ենք Թիւրքիայի անկուսակիւն
անկան և այն մասին, թէ անկարելի է
թուրք ժողովուրդին ստիպել, որ նա իւր
մէջ անհրաժեշտ սեփականները մտցնի,
կարելի է վերագրել այն սխալ հայեաց-
քին, որ գոյութիւն ունի Եւրոպայում
թուրք ժողովուրդի կուլտուրայի և կեն-
սունակութեան վերաբերմամբ: Այդ հայ-
եացքի սխալ լինելը ցուցի է մանա-
ւանդ նրա համար, որ դրա վրայ հիմ-
նուելով ենք մենք կամենում որոշել մի
ամբողջ ազգի վիճակը և ինքներս մեզ

Ամերիկայից ցորեն, հացարո-
ւներ չէր ստացւում, Եւրոպան
հացի պահանջ ունէր, Ռուսիայից
պիտի սպասէր ցորենն ու այլ
հացարոյները, քանի որ Ամերիկա-
յից յետոյ Ռուսիան է Եւրոպայի
ցորենի պահանջը լրացնում: Մեր
երկրում էլ ցորենով առևտուր
անողները գրով ինչից օգտուելով
չէին կամենում պահեստի ունե-
ցած ցորենը վաճառի հանել,
թագնում էին, որպէս զի պա-
հանջը սատականալով, գններ վի-
բին ծայրը հասնեն և իրենք հա-
րատանան... փոյթ չէ թէ հագա-
րաւոր մարդիկ սովից կտորուտ
են, փոյթ չէ որ արևան քրտին-
քով հէնց այդ ցորենը ցանող և
հնձող գիւղական ժողովուրդն ա-
նօթի մեռնում է:

2ի կարելի, իհարկէ, շատ էլ
նեղանալ այն արարածներից, ու-
րոնց կեանքի նպատակը միմիայն
փողն է՝ ինչ գնով և ինչ ճանա-
պարհով էլ որ ձեռք բերուած
լինի այդ փողը:

Յաւային և յուսահատական
այն է, որ այս տարի կտորուտ
սով կըլինէր, եթէ հացարոյսի
ցանքները վատ լինէին:

Բարեբաղդաբար հեռացնել գա-
ւառական քաղաքներից և գիւղե-
րից, Կովկասի թէ հրախայտի և
թէ հարաւային կողմերից մեր
ստացած անգիւղացիները կ-
րուում է, որ ամեն տեղ ցորենն
առատ է. հացարոյսերը լաւ են
և առատ տարի են խոստանում:
Գիւղացիներն ուրախացան, ա-

զատ չունէ բաշխել, իսկ ցորենով
առևտուր անողները և գիւղացի-
ների արհմը քանոց վաշխառու-
ները սխրեցին:

Բայց, զբոսորդաբար, այս գրու-
թիւնը երկար չտեսցի:

Հեռագնաւ ստացած նոր տե-
ղեկութիւններից իմանում ենք,
որ մի քանի տեղերում կարկուտը,
հեղեղը ոչնչացրել է հունձի հա-
մար պատրաստ, հասած արտերը,
կենդանիների համար զիջուած
խոտերը, ուրախութիւնը սուղի
է փոխուել... գիւղացիները չի-
տեն, թէ ինչո՞վ պիտի կերակրեն
իրենց հետ աշխատող և իրենց
պահպանող կենդանիներին:

Որքան էլ որ ցուալի է այդ,
բայց առաջին անգամը չէ, որ
անձրևի, կարկուտի և ընթացիկ
այլ և այլ պատահարների դժ
է գնում գիւղական ժողովուրդի
աշխատանքը և գիւղացիները մը-
նում են վերջին կտոր հացի կա-
րօտ և իրենց բաժին մնում է
միայն հարկը, բեկաւոր և անպա-
կաս վաշխառուն:

Միթէ չկան միջոցներ ապահո-
վելու գիւղական ժողովուրդի աշ-
խատանքը, միթէ չկան միջոցներ
ազատելու գիւղական ժողովուրդին
վաշխառուներից. միթէ չի կա-
րելի այնպէս անել, որ գիւղացին,
ինչ թշուառութիւններ էլ որ պա-
տահելու լինի, մի կտոր հաց
ունենայ ուտելու և իւր աշխա-
տանքի, գանձ մի մասի, տէրը
մնայ, և վերջապէս բացի բուսա-
կան և անասնական շարքաշ

կեանքից, կարողանայ սպրիլ բա-
րոյական, հողիկան և նաև մարդ-
կային կեանքով:

Միջոցներ շատ կան, բայց այդ
միջոցները չեն կարող իրենք
գիւղացիները գործ գնել, այդ
բանին արգելք են նրանց տնա-
տական և կուլտուրական վիճակը,
նրանց ազիտութիւնը, գարեբի
ընթացքում նրանց մտքի և հոգ-
ւոյ բռնած այն ուղղութիւնը, որ
ոչ մի ընկերական հասարակա-
կանի և համերաշխութեամբ գոր-
ծելու մասին ոչ գաղափար ունի
և ոչ էլ հակումն:

Կուլտուրական արդի վիճա-
կում գիւղացիներին եթէ միմեանց
հետ կապելու լինենք, որպէս զի
համերաշխութեամբ գործեն, գո-
նէ վտանգի միջոցին, կընեք-
կայացնեն մի տեսարան՝ ինչպէս
երկու գոմէշ մէկ լծի տակ միա-
սին գետի հոսանքի մէջ ընկած
մէկը աջ կողմն է քաշուած, միւրը՝
ձախ, և երկուսն էլ միասին խեղ-
դում են, այն ինչ, եթէ միասին
մէկ կողմը թեքուէին, ամենայն
գիւրութեամբ ազատ և գետի
ափը դուրս եկած կըլինէին:

Գիւղական ազգա ժողովուրդը
ինքն իրեն օգնել, իւր գրով ի-
նք բարեբաղդ չի կարող այդ հաս-
տատ է:

Հօ կարելի էր գիւղական շահ-
մարան հաստատել և շատ գիւ-
ղերից ցորեն հաւաքել և ամբա-
րել ցանքի և ձախորդ տարիների
համար:

Այս մասին գիւղերից անգամ
մեկ գրել են:

Հօ կարելի էր ցանքները, ար-
տերը, այդիններն ապահովել բնու-
թեան պատահարներից, հեղե-
ղից, կարկուտից, կայծակից:

Հօ կարելի էր այնպէս անել,
որ ոչ մի վաշխառու մուտք չը-
գործէ գիւղ կամ գիւղի մէջ վաշ-
խառուներ չըուանեն:

Պէտք էր միայն գիւղացիներին
կրկնու տալ, արժան, չափաւոր
տոկոսով փող տալ:

Գրա համար պէտք է որ գիւ-
ղական, կարուածական բանկեր
լինէին:

Այդ մասին էլ շատ է գրուել,
խօսուել, բայց չէ իրագործուել:
Իրենք գիւղացիները ոչինչ չեն
կարող անել, մինչև անգամ դը-
ժուար թէ կարողանան ցորենի
շտեմարան պահել:

Կառավարութեան վրայ ձգել
ամեն բան և ամեն հոգացու-
թիւն, չի կարելի:

Քաղաքների պահող գիւղա-
ցիներն են, իրենք քաղաքացի-
ներն ուրեմն պէտք է պահպանեն
այն ձեռքերը, որոնք աշխատում
են քաղաքների համար՝ հէնց ի-
րենց օգուտն աչքի առաջ ունե-
նալով:

Կարող են քաղաքացիներն այդ
անել, բայց թէ ինչպէս, — այդ մա-
սին միւս անգամ:

գիւրծ պահել համաշխարհային հրդեհից:
Արգայի հերցոգը (duke of Argyll)
հրատարակել է մի շարադրութիւն այս
խորադրով. «Մեր պատասխանատու-
թիւնը Թիւրքիայի առաջ: 40 տարուայ
փաստեր և յիշուած ինքները»: Նա կամե-
ցել է ստացուցանել Անգլիային՝ 1) որ
նա, Անգլիան, ահագին սխալ է գործել
պաշտպանելով թուրքաց կայսրութեան
անձեռնմխելութիւնը, ինչ ուղում է
լինի, 2) որ պէտք չէր գաղաղցնել սալ
ուսուց աշխարհակալական քաղաքակա-
նութիւնը Թիւրքիայի վերաբերմամբ և
3) որ մեծ մտաբերութիւն էր հաստ ըն-
ծալը, թէ թուրք կարող է քաղաքա-
կըրթուել և հնարաւոր է թուրքաց կայ-
սրութեան վերածնութիւնը:

«Ենկառն աննելով (գրում է Վամբե-
րին), որ յիշեալ շարադրութեան հսկի-
նակը պետական նշանուոր գարծիչ է,
որը արժանի է խորին յարգանքի ոչ թէ
միայն իւր հասարակական բարձր դիր-
քի, այլ և իւր գրական բազմաթիւ աշ-
խատութիւնների շնորհիւ, եւ աշխարհ-
ութեամբ և մանրամասնաբար ուսումնասի-
րելի թըրքական միջա հիւանդոտ ինքզին
նուրբած նրա գիրքը:

«Արգայի հերցոգը գիւղացիական
ասպարէզ մտա 1853 թ. և 1863 թուին
նա արդէն վարում էր հնդկաստանի մի-
նիստրի պատասխանատու պաշտօնը: Նա
անում է հանել գիւղութեան գանազան

ճիւղերում — ստատու արանութեան, սո-
ցիալոգիայի և բնագիտութեան մէջ: Նա
առանձնապէս հռչակուել է գարկինակա-
նութեան վրայ գործած իւր յարձակու-
մանը և Գէկուելի հետ ունեցած իւր վի-
ճարանութեամբ: Ղրիմի պատերազմի
ժամանակ հերցոգն անգլիական մինիս-
տրութեան անգամ էր, սեպտի և այն
ժամանակուայ գիւղացիական բանակ-
ցութիւններին սուած գնահատութեանն
աւելի մեծ գնահատութեամբ պիտի վե-
բարեբուել, քան պաշտօնական և կիտա-
պաշտօնական գիւղացիների ու հրա-
պարակախոսների կից անկեղծութիւն-
ներից: հերցոգի pater peccavi-ն գանուում
է, գլխաւորապէս, այն բանի մէջ, որ նա
հաւատացած է, թէ Թիւրքիայի վերածնու-
թիւնը հնարաւոր չէ: Քառասուն տարի
սրանից առաջ այդ հայեացքը իրիտ էր
տարածուած Անգլիայում և շատ համո-
զուած կողմնակիցներ ունէր, բայց ներ-
կայումս դա տեղի է տուել բարոյլին
հակառակ հայեացքը: Այն ժամանակ,
որից հերցոգն սխալում է իւր յիշու-
թիւնները, միմիայն Գրան կառավարող
չըլաններն էին համակուած սեփորմեն-
րի ուղով և համոզուած՝ որ այդ սե-
փորմեններն անհրաժեշտ են: Այն ժամա-
նակ կառավարութեան գրովը Ռէչիդ
փաշան էր — մի ջերմ հայրենասէր և պի-
տական տաղանդաւոր գործիչ, որը եռամ-
իով և անչիղ ձգտում էր իւր հայրենիքը

վերածնելու: «Եւրոպան, ստում էր նա,
մեկ փող, գէնք և բարի խորհուրդներ է
տալիս. բայց մեկ ամենից աւելի ժամա-
նակ է հարկաւոր, և բոլոր ինքներն այն
է, թէ նա մեկ հնարաւորութիւն է տա-
լիս արդեօր այդ գանձից օգտուելու»:

Ի հարկէ, սկզբնական սեփորմենը
վերաբերում էին բացառապէս արտաքի-
նին: Երգ-Քէօզլում, բոլոր մինիստրու-
թիւնների մէջ արտաքին ձեռք նոր տեղ
ու փայլ ստացաւ, բայց այդ հաստատու-
թեան բուն ուղին հաւատարիմ մնաց
հնութեանը, Պէտք է խոստովանուել, որ
շատ էլ լաշող չէին: Թիւրքիայի բարոյա-
կան և մտաւոր մակերեսը բարձրացնելու
համար արուած առաջին փորձերը և
պատահական դիտող կարող էր կատա-
ծել նրանց նպատակաշարժութիւնը մա-
սին: Սակայն, 40 տարուայ յետոյ, Կ. Պոլսի
էֆէնդիների գասակալը, Վամբերու
կարծիքով, անձանաչիկ դարձաւ. նրանց
հայեացքները, վարմունքը, ամեն ինչ
ամենայնիւ եւրոպական բնավորութիւն
ստացաւ:

Ժամանակակից թուրքերը սիրով դա-
ւանանցին ոչ թէ միայն իրենց հագու-
տին, այլ և անային սարքաւորումը: Թըր-
քական անձանի թախտերը, որոնք մի
ժամանակ բռնում էին չորս պատերից
երկրեւ, տեղի տուին եւրոպական շքեղ կահ-
կարասիքին: Թուրքերը կերակուրն ուսում
են այլ և ոչ թէ միմիայն իրենց վրայ, այլ

եւրոպական ճաշանեակներ են սար-
քում, հրամայում են, որ իրենց եւրոպա-
կան կերակուրներ մատուցանեն: Մինչև
անգամ այն «բարեպաշտ» պատուարը,
որը հարկւր բաժանում էր տղամարդ-
կանց սենեակներից, շատ անհրաժե-
թէ մի թափանցել վարագոյրի է փո-
խուել: Հին ժամանակներում քիչ չէր
պատահում, որ թուրք կանաք հրդեհի
ժամանակ ողջ ողջ այրուած էին, այդ
ստեղծի մտքը գերադասելով տղամարդ-
կանց սենեակներով անցնելու անհրա-
ժեշտութիւնից, որը կնոջ համար գրեթէ
մահացու մեղք էր համարուած: Ներկա-
յումս այդ նախադաշարմունքն այլ ևս
չկայ: Այս կէս դարի ընթացքում կամաց-
կամաց բոլորովին չըացել է թուրքերի
ընակարանների վրայ գրում արեւելեան
յատուկ կնիքը: Բայց դրա հետ չըացել է
և ասիական բնակարանի առակ գա-
ձած յարմարութիւնը. սենեակները փո-
քացի և նեղացել են, որը, և անհայն,
կարելի է բացատրել աւելի շատ՝ ընդհա-
նուր արքայապետութեամբ, քան նոր հովերն
արուած դիջումով: «Ամեն մի ժողովուրդ
(նկատում է Վամբերին), որ հականում
է օտարի արեւելութեան անհրաժեշտու-
թիւնն ու օգուտը իւր մտաւոր կեանքի
ասպարէզում, բուսական սիրով անձեռ-
տուր է լինում այդ օտարին, բայց ամե-
նից դժուարը նրա համար իւր միս և
արեան մէջ մտած բարբերից ու սովու-

նոր բացուելը պոլիտեխնիկոմները տեղեկութիւնները:

Մայրաքաղաքի թերթերի անկող թոյլատրուած է հետեւեալ նոր հրատարակութիւնները: — Կամիլին քաղաքում «Կամիլին» ամսականը, որ լայն է անանու շարժական երկր անգամ, ճաշքննում «Ռուսական թուրքական» ամսականը թերթը, Պետերբուրգում «Երկր» և «Պրատ», իսկ «Եւրոպա» լրագրող պետք է վերաբերուի «Կրիմիական» Կուրսը:

Այս տարուայ նոյնները ամսից Պետերբուրգում կընկալուի հրատարակուել «Պրատ» ամսականը նոր շարժական թերթը: Կընտրատարակուի ակցիոններական հիմնադրամով: Կայքերը, խրատանշիւրը 500 թուրքի արժողութեամբ, արդէն զընտրուած են Պետերբուրգի երկրուեալ հրատարակատարներին շնորհում: Զարգացած թերթի կանոնադրութիւնն ու ծրագրերը արդէն հաստատուած են: Թերթը նուիրուած կըլինի իրաւաբանական խնդիրներին: Խմբագրներ հաստատուած են Պետերբուրգի համալսարանի իրաւաբանական մասնաճիւղի երկու պրոֆեսոր:

Պոլկասի գիւղական-բժշկական վերակազմութեան հարցը, որ մշակել է Կովկասի քաղաքացիական մասի բժշկական վարչութիւնը, հաստատութեան համար նախքան ներքին գործերի մինիստրութեան ուղարկելը, պէտք է ներկայացնուի պ. Կատարաբազապետին՝ նրա խորհուրդն իմանալու:

Արքայական երկաթուղիների վարչութեան անգամ պ. Կորոտովսկին սկսել է իրան Անդրկովկասի երկաթուղու կառուցմանը: Զանապարհներն ու շինութիւնները:

Երկրագործութեան միջնորդութեան մէջ ինչպիսի է յարուցուած առանձին գաւառներում հիմնելու գիւղատնտեսական ակումբների ստեղծութիւնը, որոնց գործը լինելու է գիւղատնտեսութեան վրէժեան մասին իրենց շնորհակալութեամբ պարտաւար տեղեկութիւններ հաղորդել երկրագործութեան գիւղատնտեսական ակումբներին: Գիւղատնտեսութեան զանազան ձեւերի վերաբերեալ ցուցմունքներ ու խորհուրդներ առ գիւղացիներին:

Ճաշքննում մտակ ժամանակներս առաջ սպանելի համար հաստատուած կուրսերում սովորելու են լրացի ինչուս:

Կիւրսուցիչ Թորքայ հակայական երկրին:

Թորքայ ժամանակակից գրականութիւնը զարգանում է մի քիչ ուրիշ կերպով, քան արեւելեան մասնագիտանալիս երկրներում: Բնութագրողական ամենաշին երկրագիտական ընտանոթութիւն ունի: Ինքնուրուի է թարգմանական ուսմանը մեծ յանդուրժիւն ունին: Փիլիսոփայական դաստիարակութիւնները կարգաւորուած են նոյնպիսի ուշադրութեամբ, ինչպէս և գիտական ամեն տեսակ տրվածները:

Որքան շատ է դարգանում եւրոպայի բացասական վերաբերմունքը դէպի իսլամը, որքան թուրքերի համար ակնկարէ է դրանում քաղաքական անկախութիւնը կորցնելու վտանգը, — այնքան աւելի դժուար կերպով գործիւն է նրա ինքնուրու-ասկցիոնիստն ու սէրը դէպի հայրենիքը:

Մեր ժամանակում թուրք երկրատար-դութիւնը պատանեկական հասակից ուսումնասիրուած է հայրենի պատմութիւնը, օսմանն ակցիոնիստն և վառուար ժամանակներին վերաբերեալ պատմութիւնները քաղաքակրթութեան պատմութիւնը զարկն են կազմում: Թուրքերի համար առաջ պատմութիւնն անցնում են նոյն իսկ աղջկանց ուսումնասիրներում:

Թուրք երկրատարութիւնն ամեն տարի յատկապէս է եւրոպայում — գլխաւորապէս գերմանական — համալսարանները,

ների լեզուից՝ նաև, ցանկացողները համար, անդիւրերն:

Իրերի (Թորքայ) համալսարանի համար քայ է թողնուած՝ կէս միլիոն լուրի, որպէս զի ընդարձակուի կլինիկաները, կարիւնտներն ու գիտարանը և աւելացնուի պաշտօնեաների ուսմանը:

Վճարուած է բոլոր գիւղատնտեսական ուսումնարանների մաս հիմնել գիւղատնտեսական բնուր և կոմսիտներութիւն, որոնց պարտաւարութիւնն է լինելու ցանկացողներին երկրագործական և այլ գիւղատնտեսական գործիքները, մեքենաներ ու սերմ մատակարարել:

«Կատար»-ն լսել է, որ Բագրի վաճառականները մտապիւր են իրենց քաղաքում վաճառականական վարչութիւն հաստատել:

Մայրաքաղաքի թերթերն հարգում են, թէ Պետերբուրգի փողոցներում կովկացիներ են շրջում և ծախում ապարանները, լուցկու և թամբաբուի ու մաններ և այլ շնչին բաներ՝ շինուած կովկասեան արժաթից: Այդ արժաթէ շինուածքները գիտւած են տեղացիք խիստ յօժարութեամբ:

Պարտաւորացել մի գրողուր այնքան է շատացել մերթ ելիք կենդանիների քանակութիւնը Թիֆլիսի սպանդանոցում, որ ներկայումս մտքիւն սենեակներում տեղ չի լինում: Քաղաքային ընտանեկանի կատարելութիւնը միջնորդել է քաղաքային վարչութեան սենեակները շատացնելու աշխատանքը: Կարծուած է, որ այն հանգամանքը, որ ձմեռը սպանդանոցում մտքիւն կենդանիների թիւը կրկնապատուելու է:

Յուլիսի 30-ին քաղաքային առևտրական տնտեսական վարչութեան հետ միասին քաղաքի թաղային բժշկ. պ. Կատարին ու ուսանողներն աշտօնեաները գիւղացի երկաթուղային ապրանքատար կայարանում ստացուած 35 վագոն ձմերուկներն ու սերները, որ բերուած էին Գանձակից, Կարանից և այլ տեղերից: Այնքան քանակութեան սեր-ձմերուկներից 200 հատն անպէտք ձանաչուց, որ նոյն բողէին ոչնչացնել տուին:

Մտանելի շոգից յետոյ, վերջին օրերս երանակը կտրուել է և հով օրեր էին: Անցնալ օրը, շորքաբերի, յուլիսի 29-ին երկուսն այնպիսի սառ և գոլեկան քամի էր փչում, որ շատերը ծրուած էին: Ինչպէս երեւում էր, Կովկասի հիւսիսային արևմտեան կողմերը մեծ անձրևներ, կարկուտ պէտք է եկած լինի:

Գլխաւորապէս և երկրագործական ուսումնարանները, գիտութեանը ձեւարանները: Երկրատարութիւնը շարունակ կարելի է տեսնել ֆրանսիական և գերմանական դրքերի շարքերում, և նրանց ընդող յատկութիւնները կարգում են կենդանի, դիտող խնդր և լուրջ, բարեխիղճ վերաբերմունքը դէպի գործը: Այդ պատմականները, վերաբանալով հայրենիք արտասահմանում ձեւք բերած գիտութեանց պաշարով, շատ են նպաստում իրենց երկրում արևմտեան կուրսուրդի տարածմանը: Վէս դար սկսուից ից առջ թուրքերը Եւրոպայ գնալը քիչ էր մնում որ արտքը համարէին, մինչդեռ այժմ քիչ չեն այն թուրք արհեստաւորները, որոնք սիրով յաճախում են եւրոպական մայրաքաղաքները, առևտրական յարաբերութիւններ են հաստատում և իրենց շատ լաւ են գրում եւրոպացուի:

Թուրք կանանց կենսի և, աւելի ևս, մտածողութեան երանալը վերջին քառասուն տարուայ ընթացքում ենթարկուել է արմատական փոփոխութիւններ, որին նպաստել է մտտեր ներքին համոզմունքը, բայց ամենից աւելի արտաքին ազդեցութիւնը: Թուրք կնոջ զարգացման շատ են նպաստել 20 տարի առաջ հիմնուած աղջկանց ուսումնարաններն ու պանսիօնները: Կայսրութեան

Որքան, յուլիսի 31-ին, վերջին սկսուցին շոգիքը. ստուերում արդէն շերտապէր 26 աստիճանից բարձր էր ցոյց տալիս:

ՄԵՋ ԳՐՈՒՄ ԵՆ

Ս. ԷՋՄԻՆՅԵՆԻՑ.—Վհաճաւ հայրապետը յուլիսի 26-ին, կէսօրից յետոյ, ժամը 5-ին Երուսաղ գիւղի վրայով բարձրահանգ գնալ Սեան, որտեղ մի քանի օր անցկացնելուց յետոյ՝ հաւանականօրէն կ'ուղևորուի դէպի Տաթև: Նորին Սրբութեան առողջութիւնը բաւական լաւ է. միայն ներուած էր Ս. Էջմիածնի խիստ շոգիքից:

—Վհաճաւ հայրապետն ստժամանակ քաղաքայնոյ Ս. Էջմիածնից, Իւր սրբատա կոնդակով անգագար նշանակեց գեղ. Տ. Արիստակէս արք-եպիսկոպոսին, որովհետեւ գեղ. Սարգիս սրբազանը տկարութեան պատճառով իւր հայրենիքում է գտնուած:

—Հոփսիմէ վանքի նորոգութիւնը շարունակուած է. բաւականին յաջող է այդ նորոգութիւնը. պահպանուած է նրա նշանաւոր հին ճարտարապետութիւնը. հակողութիւնն սոժամանակեայ յանձնուած է Տ. Յուսիկ վարդապետին:

ՉԸՂԳԱԽՆՈՒՅՑ (Գանձակի գաւառ). — Այս տարի տեղս սպասուած էր շատ նուած հունձ, արեւին հասունացել էին և գիւղացիք չէին կշտանում իրենց արտաբերի վրայ նայելուց: Ամեն ոք ուրախ էր, որ գտնէ այս տարի մի փոքր լաւ փիճակի մէջ պէտք է լինի, արքաներն հաշուած էին, որ այս տարուայ բերքը կարող է պարտքերի մի մասին դոհոցուած ապ և իրենց տարուայ ապրուստն ապահովել: Իսկ հարուստները մտածում էին աւելի ցորենի և զարկն վաճառել:

Բայց յուլիսի 23-ին, երեկոյան ժամը 7-ին, տեղաց կարկուտ և ի գերե հանց գիւղացիներին յոյսերը: Գիւղացիք սկսուած մտան. ամեն տեղ լուծու էր լայն, ազագակ, մեծ երկն հետեւում էին և փառքերը, ամբողջ գիւղը սրբում էր իւր վիճակի վրայ: Կարկուտը տեղս 2—3 թուրպէ. գիւղացիք յոյս ունէին թէ վնասը մեծ չէ, կարելի է տարուայ հաջող և սերմնացուն հանեն: Մինչդեռ ամեն ոք գնացել էր իւր արտերին աշք ամէկու, որպէս զի վնասի քանակութիւնը որչա՛ր, ժամը 9-ին նորից լուծու գոտ-գուտ, աեղի ունեցաւ փայլատակուած և հովի ամեն միւր իւր սուրը հասաւ, որ պաշտպանուի անձրևից, երբ յուսուցաւ կարկուտի թրակ-թրակիցը, որոնք գարկում էին ապակիներին: Յուսահատութիւնը

գլխաւոր բոլոր կենդանիներում կան այդպիսի հաստատութիւններ, իսկ Կ. Պոլսում մինչև անգամ իւրաքանչիւր թաղում կայ առանձին ուսումնարան աղջկանց համար: «Երբ տեսնում էի նորահայն թրքուհիներն ուրախ, խմորվին ուսումնարան գնալու գրքերն ու տեսակները կոնքերի տակին (գրում է Վամբրին), ակամայ լընում էի թուրքերի նախկին անտարբերութիւնը դէպի աղջկանց կրթութեան խնդիրը: Զարմանքիտ չափ չկար, երբ մի անգամ, աղջկանց կրթութեան խնդիրը մէկն այցիլած ժամանակու, լսեցի նորատի շնորհաւոր թրքուհիների ներգաշնակ ձայնով արտասանած խնայցի, համարձակ պատասխանները: Աղջկանց բացի միջնակարգ ուսումնարաններից, Կ. Պոլսում կայ մի բարձրագոյն ուսումնարան, որը կրում է «Dar ul Maalumat», այսինքն «գիտութեան քննարան» բարձրագոյն անունը: Այդ բարձրագոյն ուսումնարանում անցնում են եւրոպական լեզուներ և ժամանակակից գիտութիւններ և այնտեղ յաճախող նորատի աղջկանց դիպցելի նախադասարանութիւն են տալիս մանկավարժական գործունէութեան համար: Յետոյ կան զարձակ առանձին պրոֆեսիոնալ ուսումնարաններ, որ աղջկանց սովորեցնում են գեղեցիկ արուեստներ, ձեռագործութիւն և մինչև անգամ խոհարարութիւն:

կատարեալ էր. ամենի արևը ստաշում էր երանիների մէջ, քանի լուծու էր կարկուտի ձայնը: Այս անգամ ևս տեղս 2—3 թուրպէ:

Այս գիւղ բաւական չէր. ժամը 12-ին մտա՞ երկրորդ անգամ կարկուտ տեղաց: Այս անգամ վնասը գագաթնակէտին հասաւ, կարկուտը բոլոր արտերը հողին հուսալարեցրեց և գիւղացու վերջին յոյսն անգամ կորուցեց, այս անգամ տեղս 3—4 թուրպէ և այն էլ, այնպէս խոշոր էր կարկուտը, որ մէկը 1/4 ֆունտ կամ քիչ պակաս ծանրութիւն կունենար և ընկղկղից աւելի մեծ էր: Այս կարկուտի հետեանքն այն է լինում, որ բոլոր հասկերը փչրուած են և մտում է միմիայն յետաձգի մի ուրիշ ժամանակի և դրամական կամ ուղղակի ցորենով օգնութիւն հասցնել գիւղացիներին: Պրիտաւոր խոտացալ իւր ձեւից եկածն անել և աուեց մի խնդրի սեպարութիւն, որ գիմն նահանգապետին:

Ահա, Չարախլուն, այժմ այսպիսի վիճակի մէջ է: Վաս չէր լինել, որ Կովկասի գիւղատնտեսական ընկերութիւնը իւր օգնութիւնը հասցնէր գտնէ աղքատ գիւղացիներին, որով կարգատուէին նրանք թէ քաղաքում ինչից և թէ վաճառուներին ձեռքից:

Ահա, Չարախլուն, այժմ այսպիսի վիճակի մէջ է: Վաս չէր լինել, որ Կովկասի գիւղատնտեսական ընկերութիւնը իւր օգնութիւնը հասցնէր գտնէ աղքատ գիւղացիներին, որով կարգատուէին նրանք թէ քաղաքում ինչից և թէ վաճառուներին ձեռքից:

ՄԱՍՈՒԼԻ ԾՈՒՐՋԸ

Ռուս հրապարակախօսներից մէկը, պ. Ռոզանով, այս օրերս «Նով. Վր.»-ի մէջ մի ընդարձակ յօդուած էր գեղեցիկ, որի մէջ նկարագրում էր թէ ինչպէս Վիտալիոսիւմ երկու սնուչեայ հայ երեխաները ամենայն իմաստով ջրի գրի վրայից անց էին կացնում մի շեկահարուստ փառքիկ սղջկայ, և այդ առթիւ ռուս սիրուն դատուցութիւններ էր անում այն թեմայի մասին, թէ «ամենքին որ ծուպեա, քեզ էլ կըմտայան»: Պ. Ռոզանովը ցաւ էր յայտնում ոչ-ոսու հրապարակի վերաբերմամբ գործ դրուած ներկայ քաղաքականութեան համար և աուեւ իր, թէ հնոււր ռուսացումս աւելի հեշտութեամբ և աննկատելի կերպով էր կատարում, քան թէ հիմա, որովհետեւ հնոււր այդ քաղաքա-

Եթէ միտոււման կանայք նպատեցին Սպանիայի նուաճման, եթէ նրանք Պարսկաստանում, հնդկաստանում և մահադանդան ուրիշ երկրներում նրանք փառքի են արժանացել, իրքի և բանաստեղծ, սպա արգելք չկայ, որ թուրք կանայք գործնական մասնակցութիւն ունենան Բ. Գրանդ համակած վեժանորդական շարժմանը (?): Եթե տարի արանից առաջ Կ. Պոլսում երևան եկաւ «Ֆեմինիստական» (կանանց) առաջին լրագիրը, և թուրք կանայք հոռանդով տուան գրելը, պաշտպանելով իրենց անձնական հայեացքներն ու համոզմունքները՝ համարձակ խօսելով աեֆորմներ մտցնելու անհրաժեշտութեան մասին:

Բայց և այնպէս Վամբրու վերջին եղբայրայնութիւնները միթարական շնորհա, հնուցով իւր թրքաւերութեանը, խոտուովանում է, որ՝

«Իսկական թուրք համարում են Փոքր Ասիայի սեղանականների յետնորդները և այդ իսկական թուրքերի թիւը թուրքալայում խիստ քիչ է համեմատած կայսրութեան մէջ բնակուող միւս ցեղերի թուի հետ:

«600 տարուայ ընթացքում յարասու պատերազմները խոնգարում էին այդ իսկական տարրի դարգացմանը և մինչև այժմ, շնայելով միւս ազգերի հետ խառնուելուն, թուրքերին չի յաջողուել

կանութիւնն առաջ էր տարում ինքնաբերաբար, առանց որևէ կանխամտածած «ծրագրի»:

Ռուս հրապարակախօսի կարծիքով, իրենց սխալն այն է, որ «Մեր ճնշումները իրաւունքները, լեզուն, երբեմն և գրեթէ կրօնը», որի պատճառով և այժմըս նկատելի կերպով յարութիւն են աւնում քաղաքական դազարունակը, որոնք կարող են «մտալ մտպիւր դառնալ հոբելոնի վրայ, կարող են և պայծառ արշալոյսներ դառնալ:

Նոյն «Նով. Վր.»-ի վերջին համարում Վ. Սիլ-վիլը համաձայն չէ պ. Ռոզանովի այդ մտայն մտքերի հետ և ուղղակի հակառակն է ցոյց տալիս. ռուսները ոչ մի տեղ չեն ճնշել իրենց հպատակներին ոչ իրաւունքները, ոչ լեզուն, ոչ կրօնը:

Որքան դրամ է ծախուել, որքան հազար ռուս մարդիկ են գոհուել Անդրկովկասի քրիստոնեաների համար մղուած երկարատե կրօնում, որպէս զի հնարարութիւնն արտի նրբանց աղբիւր և չնչնուելու երկբիս երեսից մահապալան պետերի ձեռքով: Բռնացել ենք մենք արեւոք նրանց իրաւունքները, կրօնի, լեզուի վրայ: Ոչ, հազար անգամ ոչ. մենք ինքներս ենք նրանց առաջ բռնել, մենք ինքներս ենք կովկասցեացի և բուր փոքր է լաւ աշքի ընկնող սեղացի-քրիստոնեաները միշտ նշանաւոր առաւելութիւն են ունեցել ռուսների առաջ: Մինչև ամենապիւրջին ժամանակ Անդրկովկասի քրիստոնեայ և մահապալան գաւառների իշխանութիւնը գտնուած էր հայերի և վրացիների ձեռքին:

Նոյնն է ֆինլանդիայում, որը մինչև անգամ սահմանադրական կառավարութիւն ունի, նոյնն է Օստրիան երկրում: Ռուսեան, ինչպէս ոչ մի պետութիւն, — սուսում է Վասիլի Սիլ-վիլը, — իւր համբերատարութիւնն է ցոյց տուել դէպի կրօնները, բարքերն ու լեզուները և ամեն մի հաստատութիւն հպատակ, առանց ազգի խորութեան, մագնում բարձրանում է հեղաբեխի մինչև ամենաարձր աստիճանները: Մեղք է յանդիմանել Ռուսիային՝ բռնութեան համար:

Թուսելով լեզուի մասին, յօդուածագիրը ի բաց է աւանում ուսումնարանը: «Նո չի կարելի թող տալ, որ պետութիւնը զարգացնի յատուկ լեզուական, հայոց, զընտելներին, աւարեան, աղբիւնեան, դարձուներին, նոյնպիսի, զընգները, բաշկերները և այլն և այլն ուսումնարանները: Դրանով Բարիլեան խառնակութիւն կըտրելը. իսկ պետութեան համար, բոլոր հպատակների բարոյական համար, կարծում ենք, անհրաժեշտ է մի ընդհանուր լեզու վարչութեան, դատարանի և ներքին գաւազան յարաբերութիւնների մէջ:

Ուրեմն ինչ պէտք է անել, հարցնում է պ. Ռոզանովի հակախոսորդը: — Պէտք է հսկել տարեայ ընթացիկ խնդիրներին, հարթել անհարթութիւնները, յանքերը կիտել կամ ժպտալ՝ ոչ ըստ կապ-

ցեղական տեսակէտից մեծամասնութիւն կազմել, որը անհրաժեշտ է պետութեան միութեան համար:

«Երբ թուրքերի մէջ զարթեց սղգայ-նութեան գաղափարը, հին աշխարհականների յետնորդները դաւնութեամբ տեսան, որ Թիւրքիայում, կամ գէթ նրա արևմտեան մասում, իսկական թուրք գրեթէ չկայ: Կայսրութեան մէջ թուրք բնակիչների թիւը 2 միլիոնից աւելի չէ: «Եւրոպական Թիւրքիայում մահապալան տարրի ներկայացումն են բունիպացիները, հերցեգովինացիները, արաւնացիները և պոմակները, — իսկ իսկական թուրքերը, որոնք կարող լինէին պաշտպանել իրենց ազգութեան վարկը, այնտեղ գրեթէ չկան կամ խիստ քիչ են: Ասիական Թիւրքիայում զրուրթիւնն աւելի վատ է, վասն զի քիւրդները, հայերը, յոյները, արաբները, սիրիացիները, քաղցկացիները և այլն կազմում են բոլոր բնակիչների աւելի քան երկու երրորդ մասը:

«Մի երկրում, ուր կառավարութիւնը իւր ստների տակ չունի ազգաբարձական ամուր հող, որը անհրաժեշտ է իւր քաղաքական բարձրագոյն իշխանութիւնը պահպանելու համար, նրա գոյութիւնը միշտ կենթարկուի ամեն տեսակ գոտաւորութիւնների և կախուած կըլինի լուրջ ռիսկերից:»

